

## ԿԱՐԾԻՔ

**Գևորգ Վարդանի Բարսեղյանի՝ «Օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովումը» վերտառությամբ, ԺԲ.00.05 – «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ**

Հանցագործությունների դեմ պայքարի արդյունավետությունը տարբեր առումներով կախված է նաև օպերատիվ-հետախուզական գործունեության պատշաճ իրականացումից: Այդ իմաստով առանձնահատուկ կարևորվում է տվյալ գործունեության քրեաիրավական ապահովումը: Բանն այն է, որ օպերատիվ-հետախուզական գործունեությանն առնչվող մի շարք հարցեր, ինչպես արդարացիորեն նշում է նաև քննարկվող ատենախոսության հեղինակը, կարգավորվում են կամ պետք է կարգավորվեն քրեական իրավունքով (օրենքով): Մինչդեռ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տվյալ ոլորտի գիտական հետազոտությունները, որպես կանոն, սահմանափակվում են միայն հետախուզական կամ քրեադատավարական ասպեկտներով:

Տվյալ համատեքստում խիստ կարևորվում է օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելիս քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելու, այդ վնասը պատճառող անձանց քրեական պատասխանատվության, օպերատիվ-հետախուզական գործունեության պատշաճ իրականացման ապահովմանն ուղղված հանցակազմերի իրավական մոդելավորման հետ կապված և մի շարք տեսական ու կիրառական այլ հարցերի հրատապ լուծումը: Բացի դրանից, նշված հարցերը չեն դադարել խնդրահարույց լինել, քրեական իրավունքի տեսության մեջ դրանց վերաբերյալ միասնական և միանշանակ դիրքորոշում չի ձևավորվել:

Շարադրվածը վկայում է Գ. Բարսեղյանի ընտրած թեմայի արդիականության և հրատապության մասին:

Աշխատանքը կառուցված է տրամաբանական հաջորդականությամբ. այն բաղկացած է ներածությունից, երեք գլխից, որոնք ներառում են ութ պարագրաֆ, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Ներածությունում հեղինակը հիմնավորել է ընտրված թեմայի արդիականությունն ու հրատապությունը, ներկայացրել ուսումնասիրության նպատակն ու խնդիրները, հետազոտության օբյեկտն ու առարկան, ատենախոսության թեմայի մշակվածության աստիճանը, հետազոտության մեթոդաբանական, տեսական և նորմատիվ հիմքերը, կատարված ուսումնասիրության արդյունքների տեսական և գործնական նշանակությունն ու ատենախոսության գիտական նորոյթը:

Աջաջին գլխում՝ «Օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովման էությունը և արդի հիմնախնդիրները» վերտառությամբ, հեղինակն անդրադարձ է կատարել տվյալ գործունեության քրեաիրավական ապահովման հասկացությանը և ուղղությունների հակիրճ բնութագրին, ինչպես նաև միջազգային և այլ պետությունների փորձին:

Հիմնվելով տվյալ գլխի շրջանակներում իրականացված ուսումնասիրության վրա՝ հեղինակը կատարել է մի շարք արժեքավոր եզրակացություններ և առաջարկներ: Դրանցից կարելի է առանձնացնել հատկապես հետևյալները.

- Օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովմանը բնորոշ են կարգավորող և պաշտպանող ուղղություններ, որոնք փոխկապակցված են և փոխլրացնող: Դրանց առանձնացումը համապատասխանում է քրեական օրենսգրքի կառուցվածքին, քանզի կարգավորող ուղղությանը վերաբերող նորմերը պետք է զետեղվեն քր. օր.-ի Ընդհանուր, իսկ պաշտպանողին վերաբերողները՝ Հատուկ մասում:
- Միջազգային / վերպետական իրավական փաստաթղթերում և այլ պետությունների օրենսդրություններում տեղ գտած կարգավորումների հետազոտումը հնարավորություն է տալիս պատկերացում կազմել ՕՀԳ քրեաիրավական կարգավորման առկա ընդհանուր վիճակի վերաբերյալ, ինչպես նաև ըմբռնել դրա զարգացման միտումները և դրա հիման վրա ուրվագծել ներպետական օրենսդրական կարգավորումների արդիականացման ու իրավական մոդելավորման հեռանկարը:

Երկրորդ գլխում՝ «Օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովման ուղղությունները» վերտառությամբ, ներկայացվել են նման գործունեություն իրականացնող անձանց քրեական պատասխանատվությունը բացառող

հանգամանքների արդի հիմնախնդիրները և զարգացման միտումները, օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելիս քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնասի պատճառման իրավաչափության պայմանները, ինչպես նաև նշված գործունեության ապահովմանն ուղղված հանցակազմերի իրավական մոդելավորման արդի հիմնախնդիրները: Այս կապակցությամբ ևս հեղինակը կատարել է մի շարք հետաքրքրարժան եզրակացություններ և առաջարկներ, որոնցից կարելի է առանձնացնել հատկապես հետևյալները.

- ՕՀԳ իրականացնող անձանց կողմից այլ անձանց հանցավոր ոտնձգությունների կանխարգելման, հանցագործությունների բացահայտման կամ անհրաժեշտ ապացույցների ձեռքբերման ընթացքում ստեղծվում է քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելու իրական հնարավորություն: Այն ենթադրում է ՕՀԳ իրականացնող անձի արարքում ձևականորեն հանցավոր տարրի առկայություն: Հետևաբար, քրեական օրենքը պետք է նախատեսի իրավաչափության կոնկրետ պայմաններ և դրանց առկայության դեպքում տվյալ անձին ձևականորեն հանցավոր համարվող արարքի համար քրեական պատասխանատվության չենթարկելու հնարավորություն՝ այդ արարքում հակիրավականության բացակայության և դրա՝ սոցիալապես օգտակար ու նպատակադրված լինելու հաշվառմամբ:
- Օպերատիվ-հետախուզական գործունեությունը և օպերատիվ-հետախուզական միջոցառումը՝ որպես երևույթներ, հարաբերակցվում են որպես ամբողջ և մաս: Ամբողջը օպերատիվ-հետախուզական գործունեությունն է, իսկ մասը՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումը: Հետևաբար, քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս կարող է պատճառվել միայն օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելիս, քանցի հենց վերջինս է ՕՀԳ արտահայտման ձևը:

Երրորդ գլխում՝ «Հանցագործության պրովոկացիան օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովման համատեքստում» վերտառությամբ, հեղինակը քննարկել է հանցագործության պրովոկացիայի իրավական էությունը և հատկանիշները, դրա սահմանազատումը հանցակցությունից, ինչպես նաև իրավաչափ օպերատիվ-հետախուզական միջոցառումները հանցագործության պրովոկա-

ցիայից տարանջատելու ՄԻԵԴ չափանիշները և հանցագործության պրովոկատորի ու պրովոկացիայի ենթարկված անձի արարքների քրեաիրավական գնահատականը: Այդ կապակցությամբ հետաքրքրարժան են հեղինակի հետևյալ եզրակացություններն ու առաջարկները.

- Օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովման տեսանկյունից հետազոտական հատուկ հետաքրքրություն ունի հանցագործության պրովոկացիայի իրավական էության ուսումնասիրությունը: ՕՀԳ իրավաչափությունը գնահատելիս հաճախ օպերատիվ-հետախուզական միջոցառումները հանցագործության պրովոկացիայից տարանջատելու անհրաժեշտություն է առաջանում:
- Այդ կապակցությամբ առաջարկվում է էապես վերափոխել ՀՀ քր. օր.-ի հոդված 477-ը՝ քրեական պատասխանատվություն սահմանելով ոչ միայն կաշառքի կամ մասնավոր ոլորտում կաշառքի, այլև ցանկացած հանցագործության պրովոկացիայի համար: Տվյալ մոտեցման հիմնավորումն այն է, որ երևույթի քրեաիրավական արգելքը պետք է ներառի այդ երևույթի հնարավոր բոլոր դրսևորումները, այսինքն՝ լինի հնարավորինս ունիվերսալ և ներառական:

Միևնույն ժամանակ, ատենախոսության վերաբերյալ առկա են որոշ նկատառումներ, որոնք ընդհանուր առմամբ հանգում են հետևյալին:

1. Վիճահարույց է հեղինակի առաջարկությունը օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձանց քրեական պատասխանատվությունը բացառող նոր հանգամանքի իրավական մոդելավորման և օրենսդրորեն այն նախատեսելու վերաբերյալ: Մասնավորապես, միանշանակ պատասխան չի տրվում այն հարցին, թե արդյոք ՀՀ քրեական օրենսգրքում նախատեսված ծայրահեղ անհրաժեշտության, մասնագիտական գործառույթների իրականացման կամ հիմնավորված ռիսկի ինստիտուտների կիրառմամբ հնարավոր չէ լուծել քննարկվող անձանց քրեական պատասխանատվության չենթարկելու հետ կապված խնդիրները: Պարզապես այն, որ, ըստ հեղինակի, քննարկվող հարցը համապարփակ կարգավորված չէ, և մշակված չէ այնպիսի նորմ, որն ուղղված լինի ՕՀԳ քրեաիրավական ապահովման ամբողջական կարգավորմանն ու կենսագործմանը (ատենախոսության էջեր 50-51), կարծում եմ, բավարար չէ նման պնդման համար: Ընդ որում, որոշ տեսաբաններ համարում են, որ



ՕՀԳ ընթացքում քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելու դեպքերը լիովին կարող են դիտարկվել ծայրահեղ անհրաժեշտության իրավաչափության պայմանների համատեքստում: Այդ առումով աշխատանքի 51-52 էջերում հեղինակի ներկայացրած հիմնավորումները, թերևս, բավարար չեն: Ուստի, ակնկալում եմ ատենախոսի լրացուցիչ պարզաբանումները և հիմնավորումներն այս կապակցությամբ:

2. Աշխատանքի ենթագլուխ 2.2.-ի շրջանակներում իրականացված հետազոտության արդյունքներով՝ առաջարկվում է ՀՀ քր. օր.-ի հոդված 41-ը վերաշարադրել նոր խմբագրությամբ (ատենախոսության էջեր 69-70, ինչպես նաև պաշտպանության ներկայացվող դրույթ 2): Այդ առումով խնդրահարույց է թվում նշված հոդվածի 2-րդ մասում տեղ գտած ձևակերպումը՝ «Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձը ենթակա է քրեական պատասխանատվության օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելիս մարդու կյանքի դեմ ուղղված ավարտված հանցանք, առողջության դեմ ուղղված ծանր կամ սեռական ազատության և անձեռնմխելիության դեմ ուղղված ծանր կամ առանձնապես ծանր ավարտված հանցանք, ինչպես նաև այնպիսի հանցանք կատարելու դեպքում, որը պայմանավորված չի եղել հանցագործությունը բացահայտելուն, կանխելուն կամ ապացույցներ ձեռք բերելուն աջակցելու նպատակով»: Բանն այն է, որ.

- 1) Կյանքի դեմ ուղղված ավարտված հանցագործություններ կարող են լինել նաև մեղմացնող հանգամանքներով սպանությունները, անզգուշությամբ ինքնասպանության հասցնելը և անզգուշությամբ կյանքից զրկելը: Հարց է առաջանում. իսկ ինչով են դրանք տարբերվում, օրինակ՝ առողջության դեմ ուղղված ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործություններից:
- 2) Դժվար է թերագնահատել կյանքի կամ սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված չավարտված հանցագործությունների, հատկապես՝ ավարտված հանցափորձերի վտանգավորությունը: Ուստի, արդարացված է արդյոք դրանց պարագայում քննարկվող համատեքստում պատասխանատվության չենթարկելը:
- 3) Առողջության դեմ ուղղվածների պարագայում միայն ծանր, իսկ սեռական ազատության և անձեռնմխելիության դեմ ուղղվածների պարագայում՝ ծանր

կամ առանձնապես ծանր հանցագործությունների վերաբերյալ մատնանշումը կարող է տարբեր կերպ ընկալվել և մեկնաբանվել: Այդ իմաստով, թերևս, անհրաժեշտ է միասնական մոտեցում:

3. Վիճահարույց է թվում նաև վերը նշված հոդվածի 3-րդ մասում առաջարկվող իրավակարգավորումը: Մասնավորապես, լրացուցիչ հիմնավորման կարիք է զգում այն հանգամանքը, թե ինչով է պայմանավորված բացառությունը, որը կապված է այն դեպքերի հետ, երբ հանցագործության պրովոկացիան դրսևորվել է անձին իր դիտավորության մեջ ընդգրկված նախապատրաստվող կամ կատարվող հանցանքի համեմատությամբ ավելի թեթև հանցանքի կատարմանը սադրելով: Գուցե առավել արդարացված կլինի ՕՀՄ իրականացնելիս քրեական օրենսգրքով նախատեսված հանցագործության պրովոկացիա կատարած անձանց բոլոր դեպքերում ընդհանուր հիմունքներով քրեական պատասխանատվության ենթարկելը: Ուստի, այս կապակցությամբ ևս ակնկալում եմ ատենախոսի լրացուցիչ պարզաբանումները և հիմնավորումները:

4. Աշխատանքի ենթազուլու 3.1.-ի շրջանակներում իրականացված հետազոտության արդյունքներով՝ ՀՀ քրեական գործող օրենսգրքի հոդված 477-ը, ինչպես արդեն նշվել է, առաջարկվում է ենթարկել էական փոփոխության և շարադրել նոր խմբագրությամբ: Այդ առումով հետաքրքիր է իմանալ հեղինակի կարծիքն այն դեպքերի կապակցությամբ, երբ հանցագործության (այդ թվում՝ ծանր կամ առանձնապես ծանր) պրովոկացիան, օրինակ՝ հանցավոր կազմակերպության գոյության վերաբերյալ ապացույցներ ձեռք բերելու, նրա հետագա գործունեությունը խափանելու, վերջինիս կողմից նոր հանցանքների կատարումը կանխելու միակ տարբերակն է:

Այդուհանդերձ, ներկայացված նկատառումները, իմ կարծիքով, չեն նսեմացնում կատարված աշխատանքի ընդհանուր առմամբ դրական գնահատականը:

Ամփոփելով վերոգրյալը՝ հարկ է նշել, որ Գևորգ Վարդանի Բարսեղյանի «Օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ապահովումը» վերտառությամբ ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում «Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգով» սահմանված պահանջներին, իսկ հեղինակն արժանի է ԺԲ.00.05 – «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի իր կողմից հայցվող գիտական աստիճանին:

Ատենախոսության սեղմագիրն արտացոլում է ատենախոսության հիմնական բովանդակությունը, իսկ հեղինակի հրապարակած գիտական հոդվածները (այդ թվում՝ համահեղինակությամբ)՝ դրա հիմնական դրույթները:

**Պաշտոնական ընդդիմախոս՝**

**Արդարադատության ակադեմիայի ղեկավար,**

**իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր**




**Ս. Առաքելյան**

Ս. Առաքելյանի ստորագրությունը հաստատում եմ՝

**Արդարադատության ակադեմիայի**

**աշխատակազմի ղեկավար**



**Ռ. Շահինյան**

**27.11.2025 թ.**

